



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏ. ՏՐ. Լ. Պ. ՀՈՒԱՅԹ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۱۲ ذی القعدہ ۳۱۹ و ۷ شباط  
۳۱۷ تاریخلی و ۳۲۸ نومروی رخصتنامہ سیلہ نشر اولمشدر  
مصارفی آمریقان مسیونر شرکتی طرفندن تسویہ اولندرق طبع اولمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Յ. ՊՕՅԱՃԵԱՆ

1902

208.1

Σ - 91

208.1 u r .  
2-91

17 SEP 2009

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

# ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՄԱՐ




ՊԱՏ • ՏՐ • Լ • Պ • ՀՈՒԱՅՔ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک ۱۲ ذی القعدہ ۳۱۹ و ۷ شباط  
۳۱۷ تاریخلی و ۳۲۸ نومرولی رخصتنامہ سیلہ نشر اولمشدر  
مصارفی آمریقان مسیوتر شرکتی طرفندن تسویہ اولنہرق طبع اولمشدر



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Յ. ՊՕՏԱՃԵԱՆ




1902



ՔՐԻՍՏՈՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՄԱՐ



Հին Կտակարանին համար Քրիստոսի վկայութիւնը երկու տեսակ է. Ուղղակի և Անուղղակի: Ուղղակի՝ երբ անոր կը դիմէ, երբ կը դործածէ զանիկա, երբ կը փաստաբանէ անկէ ապացոյցներ հանելով, երբ կը կնքէ զայն իր Աստուածային հեղինակութեան կնիքովը: Անուղղակի՝ երբ խօսքով կամ գործով կը ճանչնայ անոր պատմական իրողութիւնները, կը կատարէ անոր մարգարէութիւնները, իրեն կը յատկացնէ անոր լեզուն, իրեն անձնական նպատակին կը յարմարցնէ անոր սորվեցուցածները:

Ա. Ուղղակի վկայութիւնն է որուն վրայ մտադիր ենք դրեթէ բոլորովին խօսիլ այս տետրակին մէջ, թէպէտ ինչ ինչ անկարկութիւններ պիտի ընենք անուղղակի վկայութեան ալ, տետրակս աւարտելէ առաջ:

Հին Կտակարանի Աստուածային հեղինակ



624  
39

2001



կութեան մասին մեր Տէրոջ տուած անուղ-  
ղակի ապացոյցին ընութիւնը յոյժ բացորոշա-  
կի մեր առջև կը դրուի Յովհաննու Աւե-  
տարանին հինգերորդ գլխուն մէկ հատուածին  
մէջ: Մեր Տէրը հոն կը ներկայանայ մեր առ-  
ջև իր հակառակորդներուն հետ վիճաբանու-  
թեան բռնուած, որոնք կը մերժէին ընդու-  
նիլ իր վարդապետութիւնները, կամ ճանչ-  
նալ թէ ինք իրաւունք ունի անոնցմէ պահան-  
ջել որ հաւատան և հնազանդին իրեն: Կը  
ցուցնէ թէ իրեն համար տրուած վկայութիւ-  
նը զանազան տեսակ էր: Եւ կ'ըսէ անոնց թէ  
ի՛նչ են ասոնք, որ իբր թէ մէկմէկէ վեր կը  
բարձրանային, ամէնէն ցածէն մինչև ամէնէն  
բարձրը:

Կար Յովհաննէս Մկրտչի վկայութիւնը:  
“Դուք Յովհաննէսին խրկեցիք, և ինքը ճշ-  
մարտութեանը վկայեց” (Յովհ. Ե. 33): Մեր  
Տէրը ուրիշ առիթով ըսաւ Յովհաննէսի հա-  
մար, թէ կիներէ ծնածներուն մէջ անկէ մե-  
ծը եկած չէ: Ուստի մարդկային ի՛նչ վկա-  
յութիւն կրնար աւելի բարձր ըլլալ քան զոր  
անիկա տուած էր, և զոր անոնք մերժած էին:

Բայց յառաջ կ'երթայ, “Բայց ես չէ թէ  
մարդոցմէ վկայութիւն կ'առնեմ” (Յովհ. Ե.  
34): “Ես Յովհաննէսին վկայութենէն ալ մեծ  
վկայութիւն ունիմ, քանզի այն գործերը որ

Հայրը ինձի տուաւ որ անոնք կատարեմ, ան  
նոյն գործերը որ ես կը գործեմ” ինձի հա-  
մար կը վկայեն թէ Հայրը զիս խրկեց” (Յովհ.  
Ե. 36): Զօրութեան և սիրոյ գործերը  
զորոնք տեսած էին անոնք և որոնք կը պատ-  
մուէին անոնց, ասոնք, անշուշտ, բաւական  
էին ցուցնելու թէ ան որ կրնար ընել այս-  
պիսի բաներ, այնպիսի մէկն էր որ ճշմարտու-  
թիւնը կը խօսէր, և իրաւամբ կը պահանջէր  
Աստուածային պատիւ զոր անոնք կը զլանային  
մատուցանել:

Բայց քան նոյն իսկ անոր հզօր գործերն  
անգամ աւելի բարձր վկայ մը կար: Աստ-  
ուած ինքը խօսած էր. “Հայրը որ զիս խըր-  
կեց, ինքը վկայեց ինձի համար. դուք բնաւ  
անոր ձայնը չսեցիք, ոչ ալ անոր կերպարան-  
քը տեսաք, և ոչ անոր խօսքը ձեր մէջը բը-  
նակած ունիք, քանզի ան որ ինքը խրկեց՝  
դուք անոր չէք հաւատար” (Յովհ. Ե. 37,  
38): Անոնք լսած չէին Աստուծոյ ձայնը, և  
սակայն անիկա խօսած էր անոնց, և վկայած  
էր Յիսուս ֆրիստոսի համար: Այս ի՛նչպէս  
կրնար ըլլալ: Յաջորդող համարը կը բացատ-  
րէ, “Գիրքերը քննեցէք, ինչու որ դուք ա-  
նոնցմով կը սեպէք յաւիտենական կեանքը  
ունենալ, և բուն անոնք են որ ինձի համար  
կը վկայեն” (Յովհ. Ե. 39): Ահա բարձրագոյն



վկայութիւնը, ահա բարձրագոյն կէտը: Ան կը զրկէ զանոնք այն Գիրքերուն, որոնց շատ ընտանեցած էին, որոնց ծանօթացած ըլլալուն համար այնքան հպարտացած էին, որոնց ընտելացած էին մանկութենէ հետէ, որոնց մէջ, կ'ընդունէին թէ, յաւիտենական կեանքը կը գտնուէր: Կը հրամայէ որ անոնք անոնց մէջէն լսեն թէ յաւիտենական Աստուծոյ, իր Երկնաւոր Հօր, ձայնը կը խօսի իրենց և կը վկայէ իր Որդւոյն համար: Եթէ անոնք քննէին Գիրքերը, ուղիղ կերպով պիտի գիտնային թէ ո՞վ էր Յիսուս, պիտի ճանչնային զանիկա իբրև Մէկը որ ճշմարտութիւնը կը խօսէր, և անոր պիտի գային կեանքի համար:

Կրնա՞ր միթէ քան զայս աւելի բարձր և աւելի ուղղակի վկայութիւն մը տրուիլ Հին Կտակարանի ներշնչեալ հեղինակութեանը:

Արդ տես թէ Սուրբ Գիրքերուն համար այս առթիւ մեր Տէրոջ վկայութիւնը միայն այս մէկ անգամ չտրուեցաւ: Անիկա լրկ օրինակ մըն է այն պատիւին զոր ան կ'ընծայէր իր երկրաւոր ամբողջ կենցաղին մէջ: Անիկա ամէն տեղ Անոր համար իր Հօրը Խօսքն է, զոր պէտք է ընդունիլ և որու պէտք է հնազանդիլ սիրալիր ակնածութեամբ և հպատակութեամբ: Շահեկան է գիտել թէ Յի-

սուսի կանխագոյն կեանքին մէկ միջադէպը որ պատմուած է անոր մանկութեան և հրապարակային պաշտօնի սկզբնաւորութեան մէջ տեղ, սոյն նիւթին կը պատկանի այն երեսուն տարիներուն մէջ երբ մէկ անգամ վերցուեցաւ այն քօղը զոր Աստուծոյ իմաստութիւնը սփռած էր Փրկչին կանխագոյն կեանքին վրայ: Եւ մենք կը գտնենք զանիկա տասներկու տարեկան տղայ մը Օրինաց վարդապետներուն մէջ, որ կ'ունկնդրէ և հարցումներ կ'ուղղէ անոնց: “Ձիս ինչո՞ւ կը փնտռէիք, չէ՞իք գիտեր թէ ինձի պէտք է որ իմ Հօրս տունը (կամ անոր գործերուն մէջ) ըլլամ” (Ղու. Բ. 49), պատասխանեց Մարիամի և անոր ամուսնին: “Իմ Հօրս տունը,” անոր Խօսքը լսելու և հրահանգուելու համար:

Յիսուս կը մկրտուի երեսուն տարեկան հասակին մէջ, և իսկոյն Հոգիէն կը տարուի անապատ Սատանայէն փորձուելու համար: Երեք անգամ յարձակում կը կրէ, երեք անգամ յաղթական կը հանդիսանայ, մինչև որ վերջապէս Սատանան կը թողու զանիկա: Իւրաքանչիւր փորձութեան մէջ Յիսուսի զէնքը միեւնոյն է — Աստուծոյ խօսքը: “Գրուած է թէ” (Մատ. Դ. 4, 7, 10), երեք անգամ կը կրկնէ, ամենաբաւական պատասխանը Չարին թելադրութիւններուն:



Անոր պաշտօնէութիւնը կը սկսի, ան կը կանգնի ժողովարանին մէջ՝ սորվեցնելու համար: Նազարէթի մէջ պատահած դէպքին ատենը անոր վարդապետելու ոճին և յատկութեան մէկ օրինակն ունինք: Հոն անոր տրուեցաւ Եսայի մարգարէին գիրքը: Կը կարդայ անոր վաթսունըմէկերորդ գլխուն մէջ Մեսիայի վրայով գրուած մարգարէութիւնը: Կը նստի և կը սկսի սորվեցնել, այդ մարգարէութիւնը իրեն վրայ մեկնելով, «Այսօր աս գրուածը կատարուեցաւ ու ձեր ականջները լսեցին» (Ղու. Դ. 16—21): Մեր Տէրոջ երկրային պաշտօնին վերաբերեալ պատմութիւններուն մէջ մեծ բաժին մը տրուած է անոր Հրեաներուն հետ ըրած վիճաբանութիւններուն, անոնց հետ որոնք կը մերժէին զանիկա ընդունիլ, և իրենց բոլոր կարողութիւնով կը հակառակէին անոր: Այս հակաճառութիւններուն մէջ ամէն տեղ կը գիտենք թէ անիկա ինչպէս կը պատուէ Սուրբ Գիրքերը իբրև Աստուծոյ Խօսքը, թէ անոնք իրեն համար ինչպէս վերջնական ատեանն են հակաճառութեան մէջ: Ինչպէս յաճախ կը ներմուծէ կամ կը մղէ իր փաստերը կամ պատասխանները այսպիսի խօսքերով, «Չէք կարդացեր դուք»: «Օրէնքին մէջը չէք կարդացեր»: (Մատ. ԺԲ. 3, 5): «Թէոր գիտնայիք թէ ինչ

ըսել է» (Մատ. ԺԲ. 7): «Աստուած պատուիրեց ըսելով» (Մատ. ԺԵ. 4): Ասոր համապատասխանող ուրիշ տեղի մը մէջ ըսուած է, «Մովսէս պատուիրեց»: «Աղէկ մարգարէութիւն ըրաւ ձեր վրայ Եսայի» (Մատ. ԺԵ. 7): «Գրուած է»: «Այո, բնաւ չէք կարդացեր» (Մատ. ԻԱ. 16): «Բնաւ չէք կարդացեր գրքին մէջ» (Մատ. ԻԱ. 42): «Ինչպէս Դաւիթ Հոգիով զանիկա Տէր կը կոչէ» (Մատ. ԻԲ. 43): «Պատուիրանքները գիտես» (Մար. Ժ. 19): Մովսէսին գրքին մէջը չէք կարդացեր» (Մար. ԺԲ. 26): «Ինքը Դաւիթ Սուրբ Հոգիով կ'ըսէ» (Մար. ԺԲ. 36): «Չէք կարդացեր դուք Դաւիթին ըրածը» (Ղու. 2. 3): «Օրէնքին մէջ ինչ գրուած է, ինտոր կը կարդաս» (Ղու. Ժ. 26): «Բայց մեռելներուն յարութիւն առնելը Մովսէս ալ իմացուց մորենիին պատմութեանը մէջ» (Ղու. Ի. 37): «Թէոր դուք Մովսէսին հաւատայիք, ինձի ալ պիտի հաւատայիք, ինչու որ անիկա ինձի համար գրեց: Բայց թէոր անոր գրածներուն չէք հաւատար, իմ խօսքերուս ինտոր պիտի հաւատաք» (Յովհ. Ե. 46, 47): «Մարգարէից մէջ գրուած է» (Մար. Ա. 2): «Ան որ ինձի կը հաւատայ, ինչպէս որ գիրքը կ'ըսէ» (Յովհ. Է. 38): «Չէ որ ձեր օրէնքին մէջը գրուած է» (Յովհ. Ժ. 34): «Կա



րելի չէ որ ան դրուածը աւրուի” (Յովհ. Ժ. 35) : Եւ իր այս թշնամիներուն, իր ամէնէն վսեմ առակներէն մէկուն մէջ Աբրահամի բերանը դրուած խօսքերուն միջոցով, ըրաւ ազգարարութիւն որ այնպէս զարմանալի կերպով կատարուեցաւ, “Թէոր Մովսէսին ու մարգարէներուն մտիկ չեն ըներ, ոչ ալ թէ որ մեռելներէն մէկը յարութիւն առնելու ըլլայ, պիտի համոզուին” (Ղուկ. ԺԶ. 31) : Փարիսեցիներուն դէմ աւելի ծանր ամբաստութիւն չբերաւ քան զայս թէ “Ձեր աւանդութեանց պատճառաւ Աստուծոյ պատճառաւ խափանած էք” (Մատ. ԺԵ. 6) : Անիկա Սաղուկեցւոց բոլոր մոլորութիւններուն պատճառ կը դնէ սա, “Դուք մոլորած էք որ ոչ գիրքերը գիտէք՝ և ոչ Աստուծոյ զօրութիւնը” (Մատ. ԻԲ. 29) : Եթէ հիմա անոր իր թշնամիներուն հետ ունեցած հակաճառութիւններէն դառնանք իր բարեկամներուն տուած հրահանգներուն, կը տեսնենք թէ միւսնոյն պատիւը կ’ընծայէ Սուրբ Գիրքերուն : Անոնցմէ կը հանէ հին ու նոր բաներ իր աշակերտներուն հրահանգութեանը համար :

Լեռան վրայի քարոզին մէջ իր վարդապետութեան այս մեծ հիմնական սկզբունքը դրաւ, “Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները աւրելու, չեկայ աւրե-

լու, հապա կատարելու” (Մատ. Ե. 17) : Եւ զայս կը լուսարանէ այն հոգևոր բարձր նշանակութիւնը տալով Աստուծոյ պատուիրանքներուն, ցուցնելով թէ անոնց իմաստն է ուղղել ոչ թէ լոկ արտաքին դործերը, այլ սրտին դաղանի խորհուրդներն ու նպատակները :

Երբ ժողովրդին կը բացատրէ Յովհաննէս Մկրտչի կատարած պաշտօնին բնութիւնը և արժանապատուութիւնը, կ’ըսէ թէ անիկա մարգարէէ մըն ալ աւելի էր. “Ինչու որ ասիկա է՝ որուն համար դրուած է, Ահա ես իմ դեսպանս կը խրկեմ քու երեսիդ առջևէն” (Մատ. ԺԱ. 10) . Եւ դարձեալ, “Բոլոր մարգարէները ու օրէնքը մինչև Յովհաննէս մարգարէութիւն ըրին :” “Անիկա է Եղիան՝ որ պիտի դար” (Մատ. ԺԱ. 13, 14) : Բացատրելու ատեն այն պատճառները որոնք իրեն վարդապետութիւնները առակներու ձևով սորվեցնել տուին, կ’ըսէ անոնց համար ուրոնք կը լսէին բայց չէին հասկնար, “Անոնց վրայ կը կատարուի Եսայիին մարգարէութիւնը” (Մատ. ԺԳ. 14) : Այն պատանիին որ իրեն եկաւ յաւիտենական կեանքը մտնելու կերպը սորվելու համար, սապէս պատասխանեց. “Թէ որ կ’ուզես կեանքը մտնել, պահուի՛ր ինքե՛ն” (Մատ. ԺԹ. 17—19) : Եւ երբ



պատանին երկրորդ անգամ հարցուց, “Որո՞նք,” Յիսուս պատասխանեց թուարկելով Տառնաբանեային երկրորդ Տախտակին հանրածանօթ պատուէրները: Երբ պիտի պատրաստէր իր աշակերտները անոր որ այնպիսի փորձ մը պիտի ըլլար անոնց հաւատքին, և այնպիսի յուսավրիպում անոնց սիրելի ակնկալութիւններուն, այսինքն իր չարչարանքներուն և մահուանը, զգուշաւոր է ցուցնելու մասին թէ եթէ Սուրբ Գիրքերը ճշմարիտ են, պէտք է այսպէս ըլլալ, “Որդին մարդոյ կ’երթայ՝ ինչպէս որ գրուած է իրեն համար,” “Ինտոր գրուած է Որդւոյ մարդոյ համար, որ շատ չարչարանքներ պիտի կրէ ու անարգուի.” “Ամէնքդ . . . իմ վրայովս պիտի գայ թակղիք, ինչու որ գրուած է թէ Հովիւը պիտի զարնեմ:” “Մարգարէներուն ձեռքովը Որդւոյ մարդոյ համար բոլոր գրուածները պիտի կատարուին:” “Աս էրո՞ւմ բանն ալ պէտք է որ իմ վրաս կատարուի:” “Ինչ որ ինձի համար որոշուած է՝ կատարուելու վրայ է,” Երուսաղէմի սոսկալի աղէտներուն նկատմամբ կանխաձայնած ատենը կ’ըսէ, “Ան օրերը վրէժ-ինդրութեան օրեր են, որ բոլոր էրեւանները կատարուին:”

Նայինք անոր վրայ հիմա չարչարանաց և խաչելութեան վշտագին ժամերուն մէջ, և

տեսնենք թէ անիկա ի՞նչպէս կը գործածէ Սուրբ Գիրքը: Սուրբ Գիրքը անոր կը հայթայթէ ամենահզօր շարժառիթ մը անոր ինքզինք իր թշնամիներուն ձեռքը յանձնելուն: “Կը կարծե՞ս թէ,” կ’ըսէ Պետրոսի, որ իր սուրը քաշեր էր կատաղաբար զանիկա պաշտպանելու համար, “Կը կարծե՞ս թէ չեմ կրնար հիմա իմ Հօրս աղաչել, և ինձի հասցնէ տաներկու գունդէն աւելի հրեշտակներ: Բայց ի՞նչպէս պիտի կատարուին գիրքերը, թէ պէտք ասանկ ըլլալ” (Մատ. 19. 53, 54): Իր բոլոր չարչարանքներուն մէջ միայն մէկ անգամ կը լսենք որ կը գոչէ մարմնաւոր նեղութեան համար, և այնուհետև “Յիսուս . . . (որպէս զի գրուածը կատարուի) ըսաւ, “Ծարաւ եմ” (Յովհ. 7. 28): Սուրբ Գիրքին խօսքերէն կը հասկցուի թէ անոր հոգւոյն տաղնապը կ’արտայայտուի ծայրագոյն լքման մէջ բայց անյողող հաւատքով երբ կ’աղաղակէ անիկա դառնապէս, “Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր” (Մատ. 11. 46, Սաղ. 115. 1): Եւ երբ խաւարը կ’անցնի, և լոյսը կը սկսի նորէն ծագիլ Չարչարուողին հոգիին վրայ, վերջնական յաղթութեան և խաղաղութեան խօսքերն ալ Սուրբ Գիրքին են. “Հայր, քու ձեռքդ կ’աւանդեմ իմ հոգիս” (Գու. 19. 46):



Ահա այսպէս զննեցինք մեր Տէրոջ երկ-  
րաւոր կեանքին բոլոր ընթացքը, անոր սկիզ-  
բէն մինչև վախճանը: Տեսանք թէ միօրինակ  
է անոր բոլոր Հին կտակարանի Սուրբ Գրոց հա-  
մար տուած վկայութիւնը: Անոնք անոր ման-  
կութեան ուրախութիւնն էին և անոր կեան-  
քին մշտնջենաւոր ընկերը: Անոնց միջոցով  
պաշտպանութիւն կը գտնէր փորձութեան ժա-  
մուն մէջ. անոնք հոգեւոր սուրն էին որով  
վտարեց իր հակառակորդը: Անոնք անոր վար-  
դապետութեան դասագիրքն էին, և ամենա-  
բաւական զէնք հակաճառութեան մէջ: Վիշ-  
տերու ատեն անոնք անոր սորվեցուցին հա-  
մակերպութիւն: Անոնք կը մխիթարէին զա-  
նիկա իր ամէնէն խաւար վայրկեաններուն  
մէջ, և ան գործածեց զանոնք իր խաղաղա-  
ւետ մահուան մէջ:

Հիմա անոր հետեւինք գերեզմանին մէջ, և  
գիտենք և ունկնդրենք անոր իբրև յարուց-  
եալ Փրկչին: Զանքեր եղած են մեր Տէրոջ  
Հին կտակարանը գործածելէն ելած ձեռ-  
նարկութիւնները տկարացնելու, ըսելով թէ  
ուրիշ ուէ բարեպաշտ Հրեայ ալ կրնար ընել  
ատիկա, ըսելով նաև թէ անոր գիտութիւնք  
սահմանափակ էր, և թէ անիկա իր շուրջ  
գանուղներուն թերի և մոլորական տեսու-  
թիւններուն մասնակից էր: Բայց այս բանը

անշուշտ չկրնար ըսուիլ անոր վրայ երբ յա-  
րութիւն առաւ գերեզմանէն, և այսպէս հզո-  
րապէս յայտարարեց թէ ինք էր Որդին Աս-  
տուծոյ: Անիկա այլ ևս պաշարուած չէր տկա-  
րութիւններով, այլ ևս չփորձուեցաւ ինչպէս  
մենք կը փորձուինք: Անոր երկրաւոր կեանքը  
անցած է, անոր փառաւոր կեանքը սկսաւ  
արդեամբ: Կը հարցնենք ուրեմն, Անիկա Սուրբ  
Գիրքին վրայով իր առաջուց ըսածներէն ուէ  
բան յետս կոչեց կամ փոխեց: Պատասխանն  
է Ոչ: Անոր վկայութիւնը միւսնոյն է միշտ.  
Եթէ կարելի է, առաջուրնէ աւելի յստակ և  
որոշ և ընդարձակ: “Ով անմիտներ ու թու-  
լասիտներ հաւատարու ան բոլոր բաներուն  
որ մարգարեները խօսեցան,” էր անոր ուղ-  
ղած յանդիմանութիւնը երկու վշտացած ա-  
շակերտներուն Էմմաւուսի ճամբուն վրայ, “չէ՞  
որ Քրիստոսի պէտք էր այս չարչարանքները  
կրել և իր փառքը մտնել: Ու սկսելով Մով-  
սէսէն և բոլոր մարգարէներէն՝ կը մեկնէր ա-  
նոնց, ինչ որ իրեն համար բոլոր գիրքերուն  
մէջ գրուած էր” (Ղու. ԻԴ. 25—27): Այս  
էր որ գրեթէ կը յայտնէր զանիկա ինքզինք  
անոնց ճանչցնելէն առաջ, այնպէս որ անոնց  
սիրտերը կը բորբոքէին անոնց ներսիդին երբ  
անոնց հետ կը խօսէր ճամբուն վրայ, և Սուրբ  
Գիրքերը կը պարզէր անոնց (Ղու. ԻԴ. 32):



Յետոյ Երուսաղէմի մէջ, հոն հաւաքուած աշակերտներուն կը կրկնէ այդ վկայութիւնը, և իր սորվեցուցածներուն հետ կը կցէ զորոնք խօսած էր իր մահէն առաջ. «Ասոնք են ան խօսքերը որ ձեզի խօսեցայ՝ երբոր դեռ ձեր քովն էի. թէ Պէտք է որ կատարուի ան ամէնը՝ որ Մովսէսի օրէնքին մէջ և մարգարէներուն մէջ և սաղմոսներուն մէջ ինծի համար գրուած են: (Ղուկ. ԻԴ. 44): Այսպէս վկայութիւն կու տայ Եբրայական Սուրբ Գիրքերուն երեք մեծ բաժանումներուն իւրաքանչիւրին մարգարէական ներշնչութեանը:

Այնուհետև կ'ըսուի թէ ան բացաւ անոնց միտքը որ գիրքերը հասկընան (Ղուկ. ԻԴ. 45), և ըսաւ անոնց, «Ասանկ գրուած է, և ասանկ պէտք էր Գրիստոսի չարչարուիլ ու երրորդ օրը մեռելներէն յարութիւն առնել» (Ղուկ. ԻԴ. 46):

Եւ այսպէս այս բառերը «Գրուած է» զորոնք ան խօսեցաւ իր պաշտօնին սկսելէն առաջ, Չարին հետ ունեցած պայքարին մէջ, զորոնք տեսանք թէ այնքան յաճախ կրկնեց, յետոյ, վերջին խօսքերէն են որոնք ելան անոր չրթունքէն, անոր աշխարհէ մեկնելէն և իր Հօր փառքը մտնելէն առաջ: Յարուցեալ Փրկիչը նոյն վկայութիւնը տուած է ինչպէս տուաւ իբրև վշտաց տէրը, որ մեռաւ խաչին վրայ:

Բ. Այսպիսի է մեր Փրկչին ուղղակի վկայութիւնը Հին Կտակարանի ներշնչեալ հեղինակութեան համար: Հիմա մեր ուշադրութիւնը համառօտիւ տանք այն վկայութեան զոր ան տուած է անոր համար անուղղակի կերպով: Այս վկայութիւնը մանրամասնաբար ներկայացնելու ձեռնարկել աւելորդ բան պիտի ըլլար: Մեր Տէրոջ ամբողջ խօսքերը և գործերը, սապէս ըսենք, Սուրբ Գիրքերով տողորուած էին, և ամբողջ վկայութիւնը ներկայացնել՝ Աւետարանները ընդօրինակել պիտի ըլլար: Եւ սակայն աղէկ կ'ըլլայ լուսաբանել քանի մը օրինակներով այս անուղղակի վկայութեան բնութիւնը:

Նախ կը դիտենք թիւր Հին Կտակարանի պատմութեան անձերուն և դէպքերուն որոնց կ'ակնարկէ մեր Տէրը, և այսպէս, իբրև պատմական, զանոնք կը կնքէ իր Աստուածային հեղինակութեան կնիքով. մարդուն և կնոջ ստեղծումը, ամուսնութեան սահմանադրումը, Շաբաթին հաստատումը, Աբէլի մահը, Նոյի օրերուն ջրհեղեղը, անոր ազատումը տապանին միջոցով, Սողոմի և Գոմոռի երկնատեղաց կրակով կործանումը, Ղովտի ազատումը, Աստուծոյ ուխտը Աբրահամի, Իսահակի և Յակոբի հետ, թրփատութեան սահմանադրուիլը Մովսէսէ առաջ, այ-



րող մտնելին, Օրէնքին տրուելը Մովսէսի ձեռքով, անոր տօներուն և ծէսերուն հեղինակութիւնը, ժողովրդին մանանայով կերակրուելը անապատին մէջ, պղնձէ օձին բարձրացումը, Դաւիթի իր արքայութեան մէջ Արիաթարէ առաջաւորութեան հացերն ընդունելը, Դաւիթ ներշնչեալ սաղմոսերգուն, Սողոմոն իր փառաւորութեան և իմաստութեանը մէջ, Սաբայի թագուհիին այցելութիւնը, Եղիա և անոր այցելութիւնն ի Սարեփթա, Եղիսէ և Նէեմանի բժշկուելը, Յովնանու զարմանալի պատմութիւնը, Նինուէացւոց ազալխարութիւնը, Ջաքարիայի մահը, Եսայի մարգարէին ներշնչութիւնը անոր մարգարէութիւններուն թէ թէ՛ կանխագոյն և թէ՛ յետագոյն մասին մէջ, Գանիէլի հեղինակութիւնն իբրև մարգարէ. ևն. : Ասոնք են մեր Տէրոջ իր խօսածներուն մէջ յիշած իրողութիւններէն և անձերէն մէկքանին, չըսենք ուրիշները որոնց անունը տրուած չէ, բայց որոնց կ'ակնարկուի յստակօրէն : Եւ մենք պարտիմք միտք բերել, թէ մեր Տէրոջ պաշտօնավարութեան պատմութիւնները ո՛րչափ համառօտ են, թէ անոր խօսած ճառերէն ո՛րչափ քիչ բան պահուած է, ո՛րքան քիչ բան ունինք մեր ձեռքը անոր իր աշակերտներուն՝ Սուրբ Գիրքին վրայ տուած բա-

ցատրութիւններէն : Եթէ անոնց վրայով աւելի ծանօթութիւն ունենայինք, անտարակոյս այս վկայութիւնը աւելի ընդարձակուած պիտի տեսնէինք : Բայց ինչ որ ունինք, կը բովանդակէ ամբողջ Հին Կտակարանը, Մենդոց գիրքէն մինչև Մաղաքեայ մարգարէութիւնը : Հին Կտակարանը դործածուեցաւ և վկայութիւն բերուեցաւ այսպէս Յիսուս Քրիստոսէ, ոչ իբրև հաւաքում կամ ամփոփում հին արձանագրութիւններու կամ ազգային տւանդութիւններու, այլ՝ իբրև Աստուծոյ ճշմարտութիւն :

Մեր Տէրը սոյն վկայութիւնը կու տայ նաև երբ առանց ուղղակի կոչում ընելու անկէ, իրեն կը պատշաճեցնէ կամ կ'իւրացնէ Հին Կտակարանին խօսքի ձևերն ու ասացուածները, և իրեն կը սեպհականէ հոն Եհովայի յատուկ տիտղոսները և ստորօգելիքները :

Չոր օրինակ երբ կ'ըսէ Նաթանայելի թէ ի՛նչպէս անիկա պիտի տեսնէր երկինքը բացուած և Աստուծոյ հրեշտակները որոնք կ'ելլեն ու կ'իջնեն Որդւոյ մարդոյ վրայ, մենք անմիջապէս կը մտածենք Յակոբի փառաւոր տեսիլքին վրայ : Երբ կ'ըսէ Հրեաներուն, «Աբրահամին ըլլալէն առաջ եմ ես» (Յովհ. Ը. 58), կը մտածենք Եհովայի ինքզինք Մով-



սէսի “ՈՐ ԷՆ” տիտղոսը յայտնելուն վրայ ։ Երբ կը կարդանք անոր բազմութեան վրայ գլխաւը, անոնց հովիւ չունեցող ոչխարներու պէս ցրուած ըլլալուն համար (Մատ. Թ. 36), և անոր իր պատգամաւորները զրկելը կորսուած ոչխարները հաւաքելու հոմար, միտք կը բերենք Եզեկիէլի 17. գլուխը ։ Եւ երբ կ’ունկնդրենք կորսուած Ոչխարին առակին, կամ Յովհաննու Ժ. գլխուն, միտք կը բերենք թէ ինչպէս այս փոխարեւական ձեւերուն ներքեւ Եհովա յայտարարեց իր սիրալիւ խնամքը և ողորմութեան նը պատակը իսրայէլի համար ։ Եւ կը տեսնենք թէ Յիսուս իրեն վրայ առնելով Բարի Հովիւ տիտղոսը, ոչ միայն կ’արտայայտէ իր փափուկ սէրն ու խնամքը, այլ թէ ինք Աստուածային էակ է ։

Մեծ ընթրիքին առակին մէջ, յստակօրէն ունի իր մտքին մէջ Սաստուածային իմաստութեան հրաւէրը որ կը գտնուի Առակաց Թ. գլխուն մէջ ։ Այդիին առակին մէջ, Եսայեայ Ե. գլուխը ունէր իր մտքին մէջ ։ Երբ փոթորիկը խաղաղութեան կը դարձնէ, գրեթէ բառ առ բառ կը կրկնէ Եհովայի գործերը որ կը նկարագրուին ճի. Սաղմոսին մէջ ։ Եթէ անպտուղ թզենին մշտնջենաւոր անպտղութեան կը դատապարտէ, անոր այդ գործին մէջ կը

տեսնենք գործադրութիւնը այն կարողութեան, զոր Տէրը կ’ըսէ Եզեկիէլի մարգարէութեան մէջ թէ ունի (Եզեկ. Ժէ. 24) ։ Երբ կը պատասխանէ Յովհաննէս Մկրտչի հարցումին, “Դուն ա՛ն էս որ պիտի գայիր,” բժշկութեան հրաշալի գործերով, իր այն գործերուն մէջ կը կրկնէ այն նշանները զորոնք Եսայի ըսած էր թէ պիտի ընկերանային իր ժողովուրդը փրկելու համար Տէրոջը գալուն հետ (Ես. 1Ե. 5, 6) ։ Կը տեսնենք Փրկչին մէջ, որ մանր տղաքը իր բազումներուն վրայ կ’առնէ, Աստուածային Հովիւը, որուն վրայով կ’ըսէ Եսայի, “Գառնուկները իր բազուկովը պիտի ժողվէ, ու զանոնք իր գրկացը մէջ պիտի կրէ” (Ես. 10. 11) ։ Եթէ կը խօսի, երբ կը կանխաձայնէ իր մահը, իր երկրէս բարձրանալուն վրայ, գիտենք թէ կ’ակնարկէ պղնձէ օձին զոր Մովսէս բարձրացուց անապատին մէջ, երբ անոր վրայ կը նայինք որ խոնարհութիւնն ու գերակայութիւնը միացուցած կը մտնէր Երուսաղէմ, իշու վրայ նստած, միտք կը բերենք թէ բոլոր ասոնք եղան կատարելու համար Զաքարիայի մարգարէութիւնը, “Մեծապէս ուրախացիր, ով Սիօնի աղջիկ . . . ահա քու թագաւորդ քեզի կու գայ” (Զաք. Թ. 9) ։ “Երբ անոր կը նայինք խաչին վրայ, երբ իր հօգին կ’աւանդէ Զատ-



կի երեկոյեան զոհին ժամուն, յայտնապէս կը տեսնենք Զատկական Գառը որուն աւրինովը կը վերկուինք: Իր դատաւորներուն առջև կը խօսի այն օրուան վրայ երբ պիտի դայ երկինքի ամպերովը և յայտնապէս կ'աւանարկէ Դանիէլի՝ Որդւոյ մարդոյ նկատմամբ ըրած նկարագրութեան (Դան. Է. 13): Եւ երբ իր երկրաւոր կեանքին վերջին տեսարաններուն մէջ, իր ոտքերը Զիթենեաց լեռան վրայ, իր հետևողներուն կուտայ իր զարմանալի պատուէրը որ բոլոր աշխարհ երթան և աշակերտեն բոլոր ազգերը, կը զգանք թէ զանոնք կը զրկէ այնպէս ինչպէս Եհովա զրկեց հին ժամանակուան Մովսէսը: Բայց փարաւոնէ աւելի ահաւոր թշնամիի մը հետ մաքառելու համար, և մարդոց բերելու համար աւելի փառաւոր ազատման մը աւետիսը և զօրութիւնը: Անոնց կը խոստանայ զօրութիւն և կարողութիւն այն գործին համար, և Աստուածային խրախոյսը որ տրուեցաւ Քոռեբի վրայ Մովսէսի մեծ ԵՍ ԵՄով, “Անշուշտ ես քեզի հետ պիտի ըլլամ,” կ'ըլլէ Փրկչին բերնէն Զիթենեաց լեռան վրայ, “Ահա ԵՍ ձեզի հետ ԵՄ մինչև աշխարհիս վերջը” (Մատ. ԻԲ. 20):

Ունինք աւելի վսեմ վկայութիւն մը զոր տուած է մեր Տէրը Հին Կտակարանի գիրքե-

մէջ ըուն համար: Այս վկայութիւնը Անոր տուող ձայնը կը լսուի երկինքէն: Այն յայտնութեան մէջ զոր ըրաւ իր Յովհաննէս ծառային ի Պատմոս, Յովհաննէս տեսաւ զանիկա անճառելի փառքով հագուած, ինչպէս Դանիէլ շատ ժամանակ առաջ նկարագրած էր “Հինաւորցը” և մտիկ ըրած էր անոր ձայնը, որ թէպէտ նման էր շատ ջուրերու ձայնի, խօսեցաւ անոր մեղմով և սիրով ինչպէս ի հնումն, և խօսեցաւ անոր ուղղակի և անուղղակի Սուրբ Գիրքերէն, ինչպէս առաջ այնքան յաճախ լսած էր անոր խօսիլը: Կը յիշէ Դրախտը և Կենաց ծառը և Բաղաամը և Բազակը և Յեզաբէլը: Կը նկարագրէ ինքզինք Հին Կտակարանէն առնուած տխրոյններով և խօսքի ձևերով: Ան է “Ամէն”ը, Հաւատարիմը և ճշմարիտը, Մէկը՝ որ կը քննէ սիրտերն ու երիկամունքները: Առաւօտեան պայծառ Աստղը, որ ունի Դաւիթի բանալին, Առաջինը ու վերջինը, Սկիզբը ու վախճանը: Բոլոր Գիրքին մէջ Ան յայնուած է իբրև Գառնուկը, տիտղոս մը որ խկոյն կը յիշեցնէ մեզի Աբէլի պատարագը, Իսահակի զոհը, Զատիկը, ամէնօրեայ զոհը, Եսայեայ ԾԳ. գլուխը: Եւ մինչ Աստուածաշունչը կ'աւարտի, Յայտնութեան վերջին գլուխները մեզ կտ կը տանին Ծննդոց առաջին գլխուն, նոր երկինքի



և նոր երկրի փառքը նկարագրելով, նոր ստեղծագործութիւն մը կը յայտնէ, և փոխանակ կորսուած Դրախտին, վերստացուած Դրախտը ունինք մեր առջև, Յետոյ անգամ մը ևս կը լսենք Տէրոջը ձայնը որ բուն իր անունով կը կրկնէ Եսայեայ հրաւէրը, գալ և ձրիապէս խմել կենաց ջուրերէն, և այն բառերով որոնք արձագանգ են անոնց որոնցմով Տէրը Մովսէսի ձեռքով վսեմապէս կը պահպանէ Օրէնքին սրբութիւնը: Տէր Յիսուս իր կնիքը կը դնէ իր յայտնութեան (անշուշտ կրնանք պատշաճեցնել զանոնք ամբողջ հատորին, որուն վերջը գրուած են անոնք): “Ես կը վկայեմ ամենուն՝ որ աս գրքիս մարգարէութեան խօսքերը կը լսէ. թէ որ մէկը ասոնց վրայ բան մը աւելցընէ, Աստուած ալ անոր վրայ պիտի աւելցընէ ան հարուածները որ այս գրքիս մէջը գրուած են: Եւ թէ որ մէկը աս մարգարէութեանս գրքին խօսքերէն բան մը պակսեցընէ, Աստուած ալ անոր բաժինը պիտի պակսեցնէ կենաց գրքէն և սուրբ քաղաքէն՝ որ աս գրքիս մէջը գրուած են: Աս բաներուն վկայութիւն տուողը կ'ըսէ, Այո, շուտով կու գամ ես” (Յայտ. ԻԲ. 18-20):

Աստուածաշնչին վերջին բառերը սիրելի աշակերտին՝ իր վարդապետին յայտարարութեան պատասխանն է, “Ամէն, եկուր, Տէր,

Յիսուս:” Մինչև որ Ան գայ, Աստուծոյ յայտնութիւնը որուն համար կը վկայէ անիկա, պիտի ըլլայ մարդոց առաջնորդը, մութ տեղը լուսաւորող լոյսը, անոնց քայլերը ուղղելու և երկինքի ճամբան ցուցնելու:

Այսպէս է մեր Տէր Յիսուս Քրիստոսի վկայութիւնը Սուրբ Գիրքին համար: Անշուշտ անկարելի է չափազանց յարգել անոր կարևորութիւնը: Անկէ հանուած ձեռնարկութիւնը ի մասին Հին Կտակարանի Աստուածային հեղինակութեան, հարկաւ կշիռ չունի այնպիսիներու համար որոնք Յիսուսը չեն նկատեր նշանաւոր մարդէ մը աւելի մէկը, որ ուրիշները խաբեց գիտութեամբ, կամ ինքզինք խաբեց անգիտութեամբ, այնպիսի մէկը՝ որ մեռաւ բայց երբեք նորէն յարութիւն չառաւ, որուն պատմութիւնը խեղաթիւրուած և ծամաժոռուած է երեակայական աւանդութիւններով: Անիկա այսպիսիներու համար գրուած չէ:

Բայց այսօր շատեր կան որոնք կը խոստովանին թէ կը հաւատան Քրիստոսի և Նոր Կտակարանը ակնածանքով կը գործածեն, որոնք նոյն ժամանակ կ'անպատուեն Հին Կտակարանի գիրքերը և կը մերժեն ճանչնալ անոնց կարևորութիւնը և հեղինակութիւնը: Անոնք չէ՞ն կրնար սորվիլ վերի ըսուածներէն



Թէ երկու կտակարանները ի՛նչպէս կապուած են իրարու հետ. և ի՛նչ հակասութիւն. խոստովանիլ ֆրիստոսի հպատակութիւն և նոյն ժամանակ մերժել զայն զոր Ան յարգեց և սիրեց, և քիչ յարգ ընծայել անոր :

Եւ ֆրիստոսի աշակերտին համար որ կը հաւատայ Առաքելական Հանգանակին պարունակած իրողութիւններուն, սոյն վկայութեան վրայ եղած մտածութիւնը խոր շահեկանութիւն ունի և աղբիւր է մեծ սիրտի : Անիկա կը ստիպուի լսել Հին կտակարանին նկատմամբ անխորհուրդ և յաճախ նախատական խօսքեր : Մարդիկ կը խօսին անոր վրայ իբր թէ ըլլար անհեթեթ առասպելներու հաւաքածոյ մը, այնպիսի բան մը որուն կարևորութիւնն անցած է, որ չկրնար տոկալ այժմու լուսաւորութեան և քննադատութեան փորձին : Գժուարութիւններ կը հանուին, որոնց հազիւ կարող է ֆրիստոսի պարզ աշակերտը պատասխանել, տարակոյսներ կը թերադրուին որոնք կը շփոթեն և կը տազնապեցնեն զանիկա :

Ի՛նչպէս պիտի վերակենդանացնէ իր հաւատքը և ռաբխացնէ անոր հոգին միտք բերելը ֆրիստոսի վկայութիւնը : Այն ատեն պիտի ըսէ, իմ վարդապետս, որ մեռաւ ու նորէն յարութիւն առաւ, ճամբան, ճշմար-

տութիւնը և կեանքը, այսպէս խօսեցաւ այս Հին կտակարանի գրութիւններուն վրայով, այսպէս կը մտածէր անոնց վրայով, այսպէս կը գործածէր զանոնք, այսպէս կը սորվեցնէր անոնցմէ, այսպէս գտաւ օգնութիւն և մտիթաութիւն անոնց մէջ : Անոնք միշտ անոր սրտին մէջ էին, և իր սրտին աւելցուքէն իր բերանը կը խօսէր անոնց վրայով և անոնց լեզուովը : Հակառակ մարդոց հարցումներուն և գժուարութիւններուն, և իմաստակութիւններուն ու հեղեղութիւններուն, ամուր կը բռնէ զայն որ սիրելի էր իր Տէրոյը, և աւելի վստահութեամբ կ'ընդունի առաքելին խօսքերը, “Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է, և օգտակար է սորվեցընելու, յանդիմանելու, շիտկելու ու արդարութեան խրատելու համար, որ Աստուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործքերու պատրաստուած” (Բ Տիմ. Գ. 16, 17) :

Կը վերջացնենք երկու երեք համառօտ գիտողութիւններով, որ բնականապէս կը թելադրուին նիւթէն .

1. Տէր Յիսուս ֆրիստոս մեզի օրինակ մը թողուց որպէս զի իր քայլերուն հետեւինք : Կը տեսնենք թէ այդ օրինակն ի՛նչպէս կ'առաջնորդէ մեզ Սուրբ Գիրքերը քննելու և գործածելու : Անկարելի է ֆրիստոսի հաս-



տատուն հետևողն ըլլալ և միանգամայն անփոյթ՝ Աստուածաշնչին նկատմամբ : Սուրբ Գիրքերը մեր սիրտերուն մէջ ունենալ իրենց բոլոր մասերովը, զանոնք գործնականի վերածել մեր առօրեայ կեանքին մէջ, ջանալ զանոնք աւելի ուսանիլ հետզհետէ, այս է՝ ցուցնել թէ մենք ունինք այն միտքը որ ֆրիստոս Յիսուսի մէջ էր :


2. Եթէ այսպիսի է մեր Տէրոջ Յիսուս ֆրիստոսի վկայութիւնը Սուրբ Գիրքին համար, ի՞նչ կշիռ և կարևորութիւն կը տրուի ուրեմն դեռահասները Աստուածաշնչին ուսման մէջ հրահանգելու պարտականութեան : Ի՞նչ աւելի անիրաւութիւն և զրկանք անոնց, քան թողուլ որ մեծնան առանց բան մը գիտնալու այն վկայութեան վրայով զոր տուած է Սուրբ Գրոց համար, որ իր կամքն է որ անոնց առաջնորդն ըլլայ ամբողջ իրենց կեանքին մէջ : Այն էր Տիմոթէոսի կանուխուան դասը զոր մանկութեան մէջ սորված էր նա, որուն կ'ակնարկէ Պօղոս երբ կը գրէ թէ անոր առաջնորդն ու պահպանողն եղած էր փորձութիւններուն, անձկութիւններուն և պատասխանատուութիւններուն ժամանակը մարդկութեան հասակին մէջ . “Հաստատուն կեցիր ան բաներուն մէջ որ սորվեցար ու հաւատացիր, ինչու որ գիտես թէ որմէ սոր-

ված ես . նաև քու մանկութենէդ ի վեր Սուրբ Գիրքերը գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Յիսուս ֆրիստոսի վրայ եղած հաւատքովը” (Բ Տիմ. Գ. 14, 15) :

3. Ի վերջոյ յիշենք թէ երբ մեր Տէրը վկայեց Հին կտակարանին համար, անոր մեծ նպատակն է ցուցնել թէ Հին կտակարանը իրեն համար կը վրկայէ . “Բուն անոնք են որ ինձի համար կը վկայեն” (Յովհ. Ե. 39) : Նոր կտակարանը Հին կտակարանի վկայութիւնը կ'ընդունի : կ'ընդլայնէ և կը լուսաբանէ և ամբողջ Սուրբ Գիրքերը միաձայն ֆրիստոսի կ'առաջնորդեն զմարդիկ : Անոնք մեր աչքերը դէպ ի ես կը դարձնեն ցուցնելով զանկա իբրև խաչեալ Փրկիչը, դէպ ի վեր՝ ցուցնելով զանկա իբրև միջնորդը փառաց մէջ, դէպ յառաջ՝ ցուցնելով զանկա իբրև Թագաւորը և ապագայ Դատաւորը, և կ'ըսեն, “Յիսուս ֆրիստոս նոյն է երէկ, այս օր և յաւիտեան :” Մարդիկ ուրիշ ինչ որ գիտնան կամ սորվին Աստուածաշնչէն, եթէ առաջնորդուած չեն ֆրիստոսի, վրիպած են այն մեծ և օրհնեալ դասէն զոր անոր նպատակն է սորվեցնել : Կ'ուզե՞նք գիտնալ թէ մենք ընդունած ենք ինչպէս արժան է, մեր Տէրոջ տուած վկայութիւնը Սուրբ Գրոց համար, պարտիմք հարցնել, ընդունած ենք



Սուրբ Գրոց անոր համար տուած վկայութիւնը: “Դուք չէք ուզեր ինձի գալ,” ըսաւ անիկա Հրեաներսն երբ Սուրբ Գիրքերուն ղրկեց զանոնք, “որ կեանք ունենաք” (Յովհ. Ե. 40), Հոգւոյն կեանքը զոր անոր հաւատացողները պիտի ընդունին: Յիսուսի գալ և այսպէս ունենալ յաւիտենական կեանք, է հաւատալ անոր Սուրբ Գրոց համար տուած վկայութեանը, և ընդունիլ անոնց Անոր համար տուած վկայութիւնը:





« Ազգային գրադարան



NL0160316



3070

*Handwritten signature or scribble in pencil, possibly reading "M. J. ..."*